

կաթողիկէ ժողովուրդը՝ որք, անտէր և առանց հովիւի չմնայ:

Մեծ յոյս ունինք որ դուք յանուն պայծառութեան սուրբ եկեղեցւոյ և Արհ. Ժնտոյեան Հայր Ներսէսի ի Տարօն վախճանելոյն յիշատակին համար՝ պիտի բարեհաճիր ևս առաւել հաստատել և առաջ տանիլ Միաբարեան վարժարաններն Մշոյ մէջ, վասն յառաջադիմութեան Հայ ազգիս և ի պայծառութիւն Հայ-կաթողիկէ Հասարակութեան:

Ի փառս և ի պարծանս երջանկայիշատակ Հօրն մերոյ մեծին Միաբարայ Աբրահօր:

Տարօնոյ Հայ ժողովուրդը չ'մոռնար Ձեր բարիքները, այլ ի վերայ սրտից ոսկեղէն տառերով գրած, անջնջելի և անմոռանալի պիտի պահեն Ձեր անմահ յիշատակները. և կ'ազօթեն յաւէտ որ տայ Աստուած և պարգեւէ խաղաղութիւն, յառաջադիմութիւն և յարատեւութիւն ամբողջ միաբանութեան ուխտիդ Միաբարայ. և մշտակաց և անսասան պահեսցէ մինչև ի կատարած աշխարհիս:

Գերապատիւ Տեարցդ սուրբ և երկնատուր օրհնութիւնը հայցելով, և սրբասնեալ աջոյն Ձերում խոնարհելով ի համբոյր՝ և յանձնելով զմեզ Ձեր սուրբ ազօթից, եմք և կը մնամք

Արհի. Գեր. Տեարցդ՝

Խ. Քոյր Մարիանէ Զաքարեան
վահան վրժպտ. Աբրահամեան
Ուսուցիչ Միաբ. Վարժարանին Նորլէնի

Մոյ (Նորիձ)



ԱՍՏՆԱՅԻ ՈՐԲԵԿԸ

— Անթիւ ևն, կը մըսիմ...

Ողբացեալ Յ. Պապիկեանի մահը կրկին մեզի կը պատկերացնէ Ատանան՝ բոցերու և արիւններու մէջ: Ատանայի ջարդը խոր խոցեց հայ սրտերը, և ան՝ համեմատութեամբ քիչ զոհերով՝ կսկծեցուց զմեզ այնքան՝ որքան տասն և հինգ տարի անընդհատ ջարդուած հայութիւնը:

Կը յիշեմ Մարտի 31ի դէպքերը երբ Սեւանիկեան Ազատարար բանակը Պոլիս մտաւ իննամսեայ կապկպուած Ազատութիւնը փրկելու Համախի ճիրաններէն՝ վսեմ. Եւլէթ փաշան իգմիտի Հրամանատարէն զինուոր խնդրեց. և հայասէր Հրամանատարը ակնարկով մը իւր շուրջ

ՀԱՅՐԵՆԻՔ Շաբաբարերք գրական, Հասարակական, Քաղաքական. — Բաժանորդագրութիւնն է Ամբրիկա. Տարեկան 2 տոլար. — Արտասահման 10 ֆր.

Հասցէն Rédaction Haïrenik
9 Knapp St.
Boston, Mass. (U. S. A.)

հաւաքեց հայ երիտասարդներ որոնք իբր կամաւոր զինուորներ զնացին կռուելու խաւարին դէմ...

Ու այն ժամերուն երբ թշուառ հայու թիւնը յաղթանակի յաջողման յոյսով կը բերկրէր և Համիտը կը զգար թէ գահընկէց պիտի ըլլար՝ այդ ժամուն «Մեծ մարդասպանը» մտածեց և ուզեց հայ արիւնին մէջ խնայել, վերջին անգամ լողալու իբր նոր Տուղրիւ մը. և հեռագրեց — «Ջարդեցէք Ատանան»... Ատանան, որ իր շրջակայքով սիրտն էր Հայութեան և ոսկեայ օղակը՝ միացնող հայկական մեծ, անձնութիւնը՝ ստրկութեան. և այդ միայն կանգուն կար յիշեցնելու մեզ մեր Անցեալը:

Ու մինչդեռ մենք իբր Ռամանեան երկրին զաւակներ Բոսնակալին անկումը և մեր Նոր կայսեր վեհ. Սուլթան Մէհմէտ Խանի Ռամանեան Գահուն վրայ բարձրանալը բերկրութեամբ պիտի տօնէինք, մինչդեռ ուրախութեամբ պիտի վազէինք Եիշուի, Տարօնոյ դաշտը, Սասուն, հայ գերեզմանոցները՝ աւետելու հայ հերոսներուն, հայ մարտիրոսներուն թէ «Այսօր վերջապէս կ'իրականանայ ձեր խոսքը, որուն զոհուեցաք», այդ օրը լսեցինք մենք վայնասունները Ատանացի մայրերու, օրհորդներու, տեսանք արիւնը որ կը հոսէր, բուցերը որ կը լափէին հայ տունները. կարգացինք այն ահուկի ոհիրները, անգթութիւնը, վայրագութիւնները գործուած դէպ ի տկար սեռը... և դէմքերնուս վրայ սառեցաւ բերկրանքը ու չկրցանք զէթ արտասուել. և արցունքը այրեց սրտերնիս...

*
**

«Ատանան ջարդուեցաւ» լսեցինք այդ օրը. և կէս տարի է որ կը կրկնենք և կ'արձագանգենք: Պիտի ըսեմ հայրենակիցներուս. Սթափինը այլ ևս չէր գրեցընենք տխրական բացագանչութիւնները:

Տակական չանդրադարձանք թէ Սահմանադրական ազատութեան առաջին ազդեցութեան ներքեւ մեր ուրախական բացա-

գանչութիւններն էին որ ժամանակ չտուին մեզ գործելու և ապագանիս արապնդելու: Հին ուժիմի հայ լրագրութեան նոր ուժիմի մէջ գինովցած զարթնումը չէ՛ր որ իր ինկածուրիսմբ ուզեց կեցցենքով և ծափերով միամիտ ժողովուրդը երեւակայական զրախտներու մէջ փոխադրել — և չտուաւ վայրկեան մը՝ ապագան խորհելու: Այդ օրերուն՝ ես Համիտի բռնակալութիւնը կը փնտռէի որ գէթ զսպուէին ազատութեան սահմանէն դուրս ոտած և գինովցած մեր հայ զրազէտները...

Այսօր երբ հայութիւնը Արտասահմանէն, Տանկաստանէն և Ռուսաստանէն ու շարքութիւնը Ատանային դարձնէ՝ պիտի լսէ Ատանացի մանուկին ողբաձայնը — «Հայրենակիցներ, անօթի եմ, կը մըսիմ...»: և զոհերն իսկ պիտի թախանձեն «մի՛ մտածէք այլ ևս կանգնելու զմեզ, հաց տուէք մեր զաւակաց, մեր կիներուն որ ապրին»...

Ահա ձմեռը կը մօտենայ, ի Նպաստ Ատանայի կազմակերպուած յանձնաժողովները թող վերստին սկսին զարնել հայ սրտերուն, որ հաց և զգեստ տան իրենց հայրենակցաց. և հայ հարուստները իրենց հաճոյքը թող փնտռեն Կիլիկիցի որրիկները ապրեցնելուն մէջ: Օգնենք այս թշուառներուն որպէս զի իրենց հայրերուն և եղբայրներուն յօշոտուած մարմինները հանգիստ մնան գերեզմանին մէջ, և ապազայի հայութեան հայեր տանք:

Հ. Մ. ՊՈՏՈՒՆԵԱՆ

ԿՈՉ ՄԻԹԹ. ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ

ԱՐԿԱՅԵԼՈՑ ԿԻԼԻԿԻՈՑ

Միաբնակութիւնս Ատանայի աղետին առթիւ 1150 ֆր. նուիրելէ վերջ՝ Կոլ մ'ըբաւ իտալացիներուն՝ օգնելու մեր թշուառ հայրենակցաց, և հաւաքուեցաւ 2627 ֆր. (ընդ ամէնը ֆր. 3777), որուն 3000 ֆր.ը զրկուեցաւ յԱտանա՝ Գեր. Թերզեան եպս.ին: — 400 ֆր. ի Հալէպ՝ Գեր. Սայրեան վարդապետին: — 300 ֆր. ի Մարաշ՝ Գեր. Արփիարեան եպս.ին: Ընդ ամէնը ֆր. 3700: